«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Միջառարկայական կապեր և ընդհանրական հասկացություններ. դրանց կիրառությունը «Մայրենի», «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկաների դասերին, ինտեգրված դասերի կազմակերպումը»

Կատարող՝ Սաղոյան Ռուզաննա

Դպրոց՝ Երևանի հ. 160 հ/դ

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Խմբի պատասխանատու՝ Անահիտ Զոհրաբյան

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------էջ 3-4
Հիմնական մաս----------էջ 4-17
Եզրակացություն----------էջ 18
Գրականության ցանկ----------էջ 19

Ներածություն

<< Գիտելիք տանող միակ ճանապարհը գործունեությունն է>>:

Բ. Շոու

Երկար տարիների մանկավարժական իմ փորձը ցույց է տալիս, որ ուսուցչի մասնագիտական պատրաստվածությունը և ուսուցման ժամանակակից մեթոդների իմացությունը անհրաժեշտ պայմաններ են դասընթացը ճիշտ կազմակերպելու համար: Դասն ավելի հետաքրքիր և արդյունավետ դարձնելու համար հաճախ դիմում ենք միջառարկայական կապերի, ինտեգրված դասերի: Եվ դրանք ճիշտ կիրառելու հմտությամբ է պայմանավորված ոչ միայն աշակերտի կրթվածության ցուցանիշը, այլև նրա արժեհամակարգի ձևավորումը և մարդկային դրական որակների ձեռքբերումը:

«Մայրենիի», «Հայոց լեզվի» և «Հայ գրականության» դասաժամերին ուսուցչի առաջին նպատակը պետք է լինի սեր սերմանել հայրենիքի,մայրենի լեզվի նկատմամբ, ձևավորել հայեցի լեզվամտածողություն, զարգացնել հաղորդակցման կարողություններ՝ նոր մեթոդներն ու հնարները ընտրելով:

Հանրակրթության իրականացումը պահանջում է արագ արձագանքել ժամանակի մարտահրավերներին, գիտատեխնիկական առաջընթացին և օրենսդրական փոփոխություններին:

1.

«Տվեք երեխային հետաքրքրասիրություն, գիտելիքը նա կգտնի ինքը»

Անատոլի Գին

Մեր ժամանակների կարևորագույն առանձնահատկություններից է տարբեր գիտությունների գաղափարների և մեթոդների ինտեգրումը: Ուսուցիչը միջառարկայական կապերի միջոցով նպաստում է սովորողների գիտելիքների ինտեգրմանը , բազմակողմանի զարգացմանը,ինտելեկտի կատարելագործմանը, մտահորիզոնի ընդարձակմանը :

Միջառարկայական կապերը խթանում են սովորողների ՝ դիտարկելու, հետազոտելու, հայտնագործելու, ստեղծագործելու կարողությունների ձևավորմանը: Այդ պարզ պատճառով հանրակրթական դպրոցում աշխատող յուրաքանչյուր ուսուցիչ պարտավոր է ոչ միայն գերազանց տիրապետել իր մասնագիտությանը որպես մանկավարժ, այլև որոշակի տեղեկատվական պաշարներ ունենալ նաև հարակից առարկաներից:

Օրնակ՝ 5-րդ և 6-րդ դասարաններում Մայրենի առարկայի ուսումնառության ընթացքում որոշակի թեմաներ (Հ. Սահյան<< Արագիլները>>, Ա.Կիրակոսյան <<Նամակ առ Հայաստան>>,Ս կապուտիկյան <<Մասիսին մոտիկ>>) միջառարկայական կապեր են ստեղծում հայոց լեզվի, պատմության, աշխարհագրության, նկարչության, երգ-երաժշտության, ժամանակակից տեխնալոգիաների հետ:Այդպիսի դասերին զարգանում է երեխայի երևակայությունը, սկսում է հորինել, մտածել, ինքնուրույն վերլուծություններ կատարել, բանավիճել:

Իրավացի է իտալացի մանկագիր, մանկավարժ Ջ. Ռոդարին: Նա կարևորել է ստեղծագործական երևակայության դերը, մշակել է այն խթանելուն, զարգացնելուն ուղղված հնարների ու միջոցների լայն զինանոց: Նա գտնում էր, որ եթե ցանկանում ես մտածել սովորեցնել, ապա նախ և առաջ պետք է հորինել սովորեցնել: Ջ. Ռոդարին շատ կարևորում էր խաղի և հեքիաթի դերը երեխայի ուսուցման ու դաստիարակության գործում:

2.

ԽԱՉՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամանակակից դպրոցի ուսուցիչը առնչվում է հետևյալ խնդիրներին՝ ի՞նչ սովորեցնել, ինչպե՞ս սովորեցնել, ինչու՞ սովորեցնել: Այս առումով առավել կարևորվում են դասավանդման այլազան մեթոդներն ու հնարները, որոնցից են խաչվող կամ ընդհանրական հասկացությունները : Իսկ ի՞նչ են դրանք:

Աշխարհի ճանաչողության միասնական մեթոդաբանական հիմքերի ապահովման նպատակով առարկայի բովանդակությունը կառուցվում է մի շարք ընդհանրական հասկացությունների վրա: Դրանք այլ կերպ կոչվում են խաչվող հասկացություններ, որոնք առանցքային գաղափարներ են և ընդհանրական են տարբեր գիտությունների համար և օգնում են սովորողներին միավորելու տարբեր առարկաներից

ձեռք բերած գիտելիքները աշխարհի մասին մեկ ամբողջական պատկերացման շրջանակներում:

Դրանք ապահովում են հայոց լեզվից և գրականությունից ուսուցանվող թեմայի կապը այլ առարկաների հետ: Առանձնացված են հետևյալ հասկացությունները՝

1. Օրինաչափություն
2. Պատճառ և հետևանք
3. Կառուցվածք և գործառույթ
4. Կայունություն և փոփոխություն
5. Անհատներ և հարաբերություններ
6. Ժամանակ և տարածություն
7. Անհատական և մշակութային արժեհամակարգ
8. Փոփոխություն և զարգացում

Այս հասկացությունները հնարավորություն են տալիս ա) նույն երևույթը հետազոտել տարբեր տեսանկյուններից, բ) ըմբռնել աշխարհի միասնականությունը և ամբողջականությունը, գ) զարգացնել վերլուծական միտքը և քննադատական մտածողությունը, դ) իրականացնել տարբեր նախագծեր, ե) նպաստել վերջնարդյունքի ապահովմանը: Սրանք առանցքային գաղափարներ են, որոնք ընդհանրական են տարբեր գիտությունների համար և օգնում են սովարաղներին՝ միավորվելու տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքները: Անհնար է պլանավորել ինտեգրված դաս՝ առանց կիրառելու այս հասկացությունները:

3.

Դասը միևնույն տարիքային խմբի կրթության կազմակերպման ձև է՝ կոնկրետ օրակարգով (դասացուցակ) և բոլորի համար միասնական կրթական ծրագրով: Այդ ձևում ներդրված են կրթական- դաստիարակչական գործընթացի բոլոր բաղադրիչները՝ նպատակ, բովանդակություն, միջոցներ, մեթոդներ, կազմակերպման և ղեկավարման գործունեություն և դրանից բխող դիդակտիկ տարրեր:

Յուրաքանչյուր դաս սկսվում է վերջնական նպատակի գիտակցումով և դրա ճշգրիտ, կոնկրետ սահմանումով, այնուհետև նպատակին հասնելու միջոցների հաստատմամբ և վերջապես նպատակին հասնելու մեթոդների սահմանմամբ:

Տարբերակում ենք դասերի մի քանի տիպեր,օրինակ՝

1. Դաս-ստուգարք
2. Դաս-փոխուսուցանում
3. Դաս-ճանապարհորդություն
4. Միջառարկայական ինտեգրված դաս
5. Ստեղծագործական դաս և այլն:

Տե՛ս ս. Վարդումյան, Լ. Հարությունյան, Ն. Ջաղինյան, Գ. Վարեելլա «Ժամամակակից մանկավարժական մոտեցումներ» «Երևան» 2003

4.

ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ինտեգրված դասերը ժամանակակից ուսուցման մեթոդների նորույթներից մեկն են: Այս տիպի դասերը կարելի է անցկացնել տարբեր առարկաներից: Ինտեգրված դասերը միավորում են տարբեր առարկաների մասնագետների ուժերը և ստեղծում միջառարկայական կապերով հարուստ դասերի օրինակներ: Այս թեմայի նպատակն է ընդգծել ինտեգրված ուսուցման նշանակությունը կրթության որակի բարձրացման գործընթացում՝ ՝ օգտագործելով միջառարկայական կապերը: Կրթական համակարգում շարունակաբար կատարվող բարեփոխումները պահանջում են նոր մեթոդոլոգիական մոտեցում կազմակերպչական և բովանդակային նշանակության խնդիրների լուծման ժամանակ, որը կնպաստի կրթության որակի բարձրացմանը: Սույն թեմայի նպատակն է ներկայացնել ուսուցման գործընթացի կազմակերպման ձևերից մեկը, որն իրականացվում է ինտեգրված ուսուցման օգնությամբ:

«Ինտեգրում» (Integr-ամբողջ)- լատիներենից թարգմանաբար նշանակում է՝ վերականգնում համալրում,մասերի միավորում մեկ ամբողջի մեջ ոչ թե մեխանիկորեն, այլ փոխադարձ ներթափանցմամբ: Արդի ժամանակաշրջանի ուսուցման առանձնահատկություններից է գիտելիքների ինտեգրման միտումը: Ուսուցումը անձնավորության գիտակցությունը ձևավորելու և զարգացնելու հատուկ կազմակերպված գործընթաց է: Այն իրականանում է ուսուցման տարաբնույթ մեթոդներով,որը որոշակիորեն կարգավորված գործունեություն է՝ մանակավարժի և սովորողի ուսուցման նպատակներին ուղղված:

Գիտամանկավարժության հիմնադիր Կոմենսկին կարևորում ինտեգրված դասերի հիմքում ընկած միջառարկայական կապը: Այսինքն՝ երբ ուսոցումը կատարվում է կապերի միջոցով, ավելի տեսանելի և ընկալելի են դառնում պատճառները, հասկանալի՝ հետևանքները:

5.

Ի՞նչ է տալիս միջառարկայական կապերի կիրառումը

Նոր կրթակարգի հիմնական առանձնահատկություններից է յուրաքանչյուր աշակերտի եզակիության, ինքնատիպության և պահանջմունքների կարևորումը, ուստի այն պետք է լինի ինտեգրող և հետազոտության մղող: Այս առումով առանձնանում են հատկապես այն դասերը, որոնք ապահովում են միջառարկայական կապերի առկայություն: Այս կապերի կիրառումը 1. զարգացնում է աշակերտների գիտելիքները, հմտությունները և վերաբերմունքը ուսումնասիրվող նյութի հանդեպ, 2. կապ է ստեղծում ուսումնական առարկաների միջև, 3. բացահայտում է աշակերտների և ուսուցչի նախաձեռնողականությունը, 4. ապահովում է աշակերտի քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացումը, 5. բացի դասագրքերից կիրառվում են նաև այլ աղբյուրներ, 6. ապահովում է գնահատում և ինքնագնահատում, 7. կապ է հաստատում տարբեր հասկացությունների միջև:

Ինտեգրված դասի պլանավորումը

Միջառարկայական կապ կարելի է ապահովել և՛ ողջ դասի ընթացքում՝ համագործակցելով հարակից առարկայի (առարկաների) ուսուցչի (ուսուցիչների) հետ, և՛ դասի որևէ փուլում ՝ նախապես ուսումնասիրելով հարակից նյութը: Դասը ամեն դեպքում վարում է ուսուցիչը, իսկ համատեղվող առարկայի ուսուցիչը կա՛մ կարող է մասնակից լինել որևէ փուլում (դա, անշուշտ, հետաքրքրություն և աշխուժություն կհաղորդի դասին), կա՛մ կարող է մասնակցել որպես հյուր: Նման դասերի ժամանակ առավել ակտիվ են աշակերտները՝ որպես անմիջական մասնակից, կատարող և ստեղծագործող: Այս դեպքում սովորելը դառնում է միջոց և ոչ նպատակ:

6.

Այսօրվա դպրոցում ուսուցումը կազմակերպվում է առանձին առարկաներից ծրագրային գիտելիքների հաղորդման եղանակով, ինչը առանձին առարկաներից տրվող գիտելիքների ամբողջություն չէ, հետևաբար աշխարհի մասին տալիս է մասնատված, ոչ ամբողջական պատկերացում: Համաշխարհային մանկավարժական միտքը վկայում է, որ

ուսուցման այս ձևը արդյունավետ չէ, և իբրև խնդրի լուծման ելք՝ առաջադրում է ինտեգրված ուսուցումը, որը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթի ընկալմանը, գիտակցմանն ու յուրացմանը:

Որպես միավորող առանցք՝ հաճախ հանդես է գալիս որևէ թեմա, որն ընդգրկում է մի քանի առարկա: 70-80-ական թվականներին ի հայտ եկան միջառարկայական կապերի և ուսուցման գործընթացում դրանց գործնական կիրառության յուրահատուկ դրսևորումներ՝ դասերի նոր տիպեր, մասնավորապես՝ ինտեգրված դասեր, որոնք այլ կերպ կոչվեցին բինար, սինթետիկ, համատեղ դասեր:

Դասի տեսակից և ինտեգրվող առարկաների դասերի տիպերից, ուսուցիչները համատեղ կազմում են իրենց դասի նպատակները՝ զուգակցելով ընդհանուրը մասնավորի հետ, շաղկապելով ինտեգրվող նյութի բովանդակությունները տարբեր առարկաների տեսանկյուններից:

Ինտեգրված ուսուցման ծրագրերը կազմվում են այնպես, որ մի առարկայից գիտելիքները հիմնվում են մեկ այլ կամ մի քանի այլ առարկաներից վերցրած գիտելիքների վրա: Սակայն ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն :

Ն. Հակոբյան, ս.. Գևորգյան, Ա. Հովհաննիսյան, Ա. Դավթյան «Մանկավարժական հաղորդակցում», Երևան 2010թ.

7.

Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերակվում են միավորված (ինտեգրված) ծրագրերի հետևյալ տեսակները.

● միջառարկայական (interdisciplinary),

● բազմառարկայական (multidisciplinary),

● անդրառարկայական (trans disciplinary) :

Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որն իր մեջ ներառում, միավորում է մեկ հասկացության ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և օգնող՝ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ ու մեթոդներ: Օրինակ՝ կարելի է ինտեգրել առարկաների բովանդակությունը՝ պահպանելով առաջատար առարկայի ուսուցման մեթոդները, ինչպես նաև կարելի է ինտեգրել տարբեր առարկաների ուսուցման մեթոդիկաները՝ պահպանելով մեկ առարկայի բովանդակությունը: Սակայն ինտեգրված դասեր ուսուցիչներն այդքան էլ հաճախ չեն կիրառում: Դրանք հիմնականում կիրառվում են հետևյալ դեպքերում.

1. երբ հայտնաբերվում են միևնույն նյութի կրկնությունը տարբեր ուսումնական առարկաներում և դասագրքերում,

2. թեմայի ուսումնասիրության ժամանակի խնայողության դեպքում՝ ցանկանալով օգտվել մեկից ավելի առարկաների պատրաստի բովանդակությունից,

3. այնպիսի ընդհանրացված հասկացությունների (շարժում, ժամանակ, զարգացում, մեծություն և այլն), օրենքների, սկզբունքների ուսումնասիրության ժամանակ, որոնք ներառում են մարդկային կյանքի և գործունեության ամենատարբեր ասպեկտներ,

4. երբ ուսումնասիրվող նյութը դուրս է գալիս ուսուցանվող առարկայի ծրագրի շրջանակներից,

5. առարկայի դասավանդման ժամանակ պրոբլեմադիր և զարգացնող ուսուցում իրականացնելու ժամանակ:

Իհարկե, կան նաև ինտեգրված դասերի կիրառման այլ դրդապատճառներ: Մինչ ինտեգրված դաս անցկացնելը՝ ուսուցիչը նախ դիմում է իր այն կոլեգային, ում

դասավանդած առարկան պետք է ինտեգրվի իր առարկայի հետ: Երկու ուսուցիչներ պարզում և որոշում են իրենց առարկաների համատեղ հետաքրքրությունը: Ինտեգրված դասի ամենախոցելի տեղը ուսուցիչների փոխգործունեության ճիշտ կազմակերպումն է. նրանցից յուրաքանչյուրի գործողությունների հաջորդականության ու ընթացքի արդյունավետ ապահովումը: Ընդ որում՝ նրանց փոխհարաբերությունները կարող են տարբեր լինել. յուրաքանչյուրն ունի հավասար մասնակցության իրավունք կամ նրանցից մեկը հանդես է գալիս որպես առաջատար, իսկ մյուսը՝ խորհրդատու, կամ ամբողջ դասը կարող է վարել ուսուցիչներից մեկը, իսկ մյուսները պարզապես խաղան ակտիվ հյուրի դեր

8.

Տարբեր է նաև ինտեգրված դասերի տևողությունը: Բայց առավելաբար օգտագործում են երկու կամ երեք դասաժամ՝ միավորված մեկ դասի մեջ: Ցանկացած ինտեգրված դաս նպատակ ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակներից: Այսպիսի դասի կազմակերպմամբ կարելի է հաղթահարել խնդրի մակերեսային և ձևական ուսումնասիրությունը, ընդլայնել ինֆորմացիան, փոփոխել ուսումնասիրության շրջանակները, խորացնել հասկացողությունը, հստակեցնել հասկացություններն ու օրենքները, ընդհանրացնել թեման, միավորել սովորողների փորձն ու դրա ըմբռնման տեսական մասը, համակարգել ուսումնասիրված նյութը: Դասի ընթացքում կարելի է ինտեգրել մանկավարժական գործընթացի ցանկացած բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց:

Օրինակ՝ երբ վերցնում են բովանդակությունը, ապա ինտեգրման համար առանձնանցվում է բովանդակության ցանկացած բաղադրիչ՝ հասկացություն, օրենք, սահմանում, փաստ և այլն: Կարելի է ինտեգրել նաև բովանդակային այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են մտավոր և գործնական կարողություններն ու հմտությունները: Տարբեր առարկաներից վերցրած այս բաղադրիչները, որոնք միավորովում են մեկ դասի մեջ, կազմում են մեկ համակարգ:Համակարգ ձևավորելը դառնում է դասի կազմակերպման կարևորագույն մասը, քանի որ հիմք է հանդիսանում հետագայում մշակվող դասավանդման մեթոդիկայի և նրա կառուցման տեխնոլոգիայի համար:

Որպեսզի ինտեգրվեն, այսինքն՝ ճիշտ ձևով միավորվեն ուսումնական գործընթացի բաղադրիչները, պետք է կատարվեն այնպիսի գործողություններ, որոնք ի

սկզբանե ունեն ստեղծագործական բնույթ: Այս նախապատրաստական գործունեության ընթացքում ուսուցիչը որոշում է.

1. ինտեգրված դասի անցկացման իր դրդապատճառներն ու նպատակը,

2.համակարգ ձևավորող բաղադրիչների մեջ առաջատարի և երկրորդականի առանձնացումը,

3. ինտեգրման ձևը,

4. միավորվող նյութերի միջև կապերի բնույթը,

5. նյութի հաջորդականության կառուցվածքը,

6. նյութի ներկայացման միջոցները,

7. դերերի բաշխումը ինտեգրվող առարկաների ուսուցիչների միջև,

8. տվյալ դասին սովորողների ուսուցման վերահսկման ձևերն ու տեսակները:

Տե՛ս Մ. Աստվածատրյան, Ա. Արնաուդյան, Ս. Վարդումյան, Ի. Օհանովա, Ռ.Պետրոսյան, Լ. Երեմյա

9.

Պարզ և հստակ ձևակերպելով դասի նպատակը՝ ուսուցիչը հավաքում է մեկ դասում միավորվող ուսումնական նյութը, այսինքն՝ որոշում է ինտեգրման բաղադրիչները: Դա արվում է համագործակցող ուսուցչի հետ: Այս փուլում հավաքվում են միայն ուսումնական թեմաներն ու դրանց առանձին մասերը, որոնք պետք է կազմեն ինտեգրման բովանդակային հիմքը: Այստեղ դրսևորվում է նաև ինտեգրմանը մասնակցող ուսուցիչների փոխհամաձայնությունը: Ապա երկու ուսուցիչ սկսում են վերլուծել ընտրված նյութը և բաժանում են այն երկու մասի՝ հիմնական և օժանդակ: Հիմնական նյութը դառնում է դասի՝ համակարգ ձևավորող բաղադրիչը: Որպես համակարգ ձևավորող բաղադրիչ՝ կարող է հանդես գալ ինտեգրվող բովանդակության միայն այն հատվածը, որը որոշվում է առաջադրանքի նպատակով: Որպես այդպիսի բաղադրիչներ՝ կարող են լինել առանձին հասկացություններ, օրենքներ, մտքեր, ուսուցման մեթոդներ և միջոցներ: Համակարգ ձևավորող բաղադրիչի առանձնացումը կարևորվում է նրանով, որ հենց դրանով է որոշվում ինտեգրվող նյութը, որպեսզի այն մատուցվի ամբողջովին, որպեսզի պարզ բացատրվեն կամ պարզվեն դրա ի հայտ գալու պատճառները: Այսպիսով, ելնելով ինտեգրված դասի տեսակից և ինտեգրվող առարկաների դասերի տիպերից, ուսուցիչները համատեղ կազմում են իրենց դասի նպատակները՝ զուգակցելով ընդհանուրը մասնավորի հետ, շաղկապելով ինտեգրվող նյութի բովանդակությունները տարբեր առարկաների տեսանկյուններից:

Կախված նրանից, թե ինչ ձևով է տեղի ունենում ինտեգրումը (հավասարապես ինտեգրվում են երկու կամ ավելի առարկաներ, ինտեգրման ժամանակ գերակայությունը տրվում է մեկ առարկայի, իսկ մյուսը դառնում է օժանդակ, օգնող առարկա և այլն), կազմվում է դասի պլանը, որոշվում է դասի տևողությունը:

Պլանի մեջ հստակորեն ներկայացվում է քայլերի հաջորդականությունը, պարզորոշ ընդգծվում են առաջատար և օժանդակ առարկաները: Ինտեգրված դասն արդյունավետ անցկացնելու նախապայմաններից ամենակարևորը դասի ճիշտ պլանավորումն է, որի մեջ, ըստ չափորոշչի եռամակարդակ պահանջների, պետք է ներառվի նաև գնահատման համակարգը:

10.

Օրինակելի դասի պլան «Հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Ինֆորմատիկա » առարկաներից

Առարկան՝ Հայ գրականություն, Հայոց պատմություն և Ինֆորմատիկա

Դասարանը՝ 8-րդ

Դասի տիպը՝ նյութի ամփոփում և գիտելիքների ամրապնդում

Դասի թեման՝ Գ. Զոհրապի <<Այրին>> նորավեպը

Դասի նպատակը՝

- աշակերտների մեջ զարգացնել դպրոցական տարբեր առարկաների միջև կապ՝ տեսնելու կարողություններ ու հմտություններ,
- զարգացնել բառապաշարը,
- խթանել արևմտահայ իրականության հասարակական և քաղաքական գործիչների և նրանց գործունեության իմացությունը
- հայ գրողների և նրանց աշխատությունների անդրադարձը պանդխտության թեմային
- զարգացնել աշակերտների բանավոր խոսքը, ստեղծագործական միտքը
- զարգացնել ՏՀՏ-ի կիրառման հմտության կարողությունը

Սովորողի ուսումնական ակնկալիքները՝

- իմանալ, թե ովքեր են արևմտահայ գրողները
- Գ. Զոհրապի և նրաստեղծագործությունների մասին
- կարողանալ ներկայացնել պատմական ժամանակաշրջանը
- կարողանալ կիրառել ՏՀՏ նորագույն ծրագրեր և կատարել առաջադրանքներ՝ օգտվելով էլեկտրոնային գրատախտակից,
- ստեղծել գրական անկյուն՝ իրենց ձեռքերով պատրաստված պաստառներով

Դասի կահավորումը՝

համակարգիչ, պրոյեկտոր և մեծ էկրան, էլեկտրոնային գրատախտակ, գրապահարան, որտեղ կդրվեն գրքերը (եղեռնազոհ հեղինակների ստեղծագործությունները), գրողների և քաղաքական գործչների նկարներ, Հայաստանի , Արևմտյան Հայաստանի քարտեզները:

Դասի ընթացքը

Բանավոր հարցում

Պանդխտությունը չարիք է եզրույթով կազմակերպել «Մտագրոհ»՝ անդրադարձ կատարելով թեմայի վերաբերյալ աշակերտների ունեցած գիտելիքներին:

Պրիզմա մեթոդը, որը մտածողության ընթացքը պատկերավոր , շոշափելի դարձնելու պարզ ձև է, օգնում է ներկայացվող գաղափարի, հասկացության վերաբերյալ ենթագիտակցության ոլորտում եղած ասոցիատիվ կապերը վեր հանել և արձանագրել:

Որպես մեկնաբառ՝ կարող ենք ընտրել պանդուխտ բառը, որը վերջնարդյունքում դառնում է չարիք:



Այսինքն՝ պանդխտության դիմելու արդյունքում կձևավորվի չարիքը (ընբանիքի փլուզում, արժեքների կործանում)

Պրիզման կիրառվում է դասի խթանման փուլում՝ ապահովելով ինչպես աշակերտների հետաքրքրությունն ու ակտիվությունը, այնպես էլ արդյունավետ սկիզբ նյութի ուսումնասիրման բուն ընթացքի համար:

Էլեկտրոնային գրատախտակի վրա Smart Notebook 11 ծրագրով կազմված առաջադրանքների միջոցով աշակերտները էլեկտրոնային գրչով ընտրում են հեղինակի անունը ՝ համապատասխանեցնելով նկարին և ստեղծագործությանը՝ ճիշտ պատասխան ստանալու համար:

11.

Յուրացված նյութի ներկայացումը կատարվում է հետևյալ առաջադրանքով՝

Կատարվում է անդրադարձ `թվարկում են գլխավոր հերոսներին, նրանց գործունեությունը և դրանից բխող հետևանքներ: Աշակերտների մեկ խումբ ներկայացնում է Գ. Զոհրապի կյանքը, գործունեությունը, նրա ողբերգական վախճանը, մյուս խումբը ներկայացնում է այդ ժամանակահատվածում ստեղծագործող արևմտահայ մտավորականներին, նրանց ստեղծագործությունները: Մեկ այլ խումբ ներկայացնում է նորավեպի իշխան Գրիգոր Զոհրապին և նրա ժողովածուները,մեկ այլ խումբ Վենի դիագրամով ներկայացնում է նորավեպի և պատմվածքի նմանություններն ու տարբերությունները, մյուս խումբը՝ <<Այրին>>նորավեպի դրական և բացասական կերպարներին, մի խումբը փորձում է նկարել գլխավոր կերպարներից որևէ մեկին,ր բոլոր խմբերը երաժշտության ներքո(նախօրոք ընտրված} գրում են <<Պանդխտությունը չարիք է>> վերնագրով փոքրիկ շարադրություն :

Դասի ամփոփում՝

12.

Դասը կարելի է ամփոփել քառաբաժան մեթոդով՝

Ի՞նչ տեսա	Ի՞նչ զգացի
Ի՞նչ իմացա	Ի՞նչ եզրակացության եկա

13.

Գնահատում՝ ամփոփիչ, ուսուցանող (լսել աշակերտների կարծիքն այն մասին, թե ինչ սովորեցին, ինչով էր այդ դասը տարբերվում մյուս դասերից, ինչը դուր եկավ, և ինչը հանդիսացավ խոչընդոտող): Դասի ավարտին աշակերտները նախօրոք պատրաստված ուսուցանող գնահատման սանդղակով կգնահատեն իրենց և կփակցնեն պաստառի վրա:

1. Տե՛ս Վ. Գյուլազյան, լ. Առուշանյան, Մ. Գասպարյան «Ուսուցչի ուղեցույց տետր»

Եզրակացություն

Այսպիսով ՝ ինտեգրված դասը չափազանց գրավիչ ձև է սովորողների համար, սովորողին տալիս է լիարժեք պատկերացում նյութի վերաբերյալ: Ինտեգրված դասը տարբեր առարկաների, ուսումնական նյութերի մեջ մի ամբողջություն է՝փոխադարձ իրար լրացնող՝ և՛ իմաստով, և՛ ձևով: Միջառարկայական համակարգված մոտեցման ներդրումը թույլ է տալիս ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերել, բարձրացնել սովորողի ինտելեկտուալ մակարդակը, ավելացնել նրա հետաքրքրությունն ուսման նկատմամբ, ընդլայնել մտահորիզոնը և զարգացնել դպրոցականների պոտենցիալ հնարավորությունները: Միջառարկայական կապերով հագեցած ինտեգրված դասեր անցկացնելիս ավելի հաջող է լուծվում տարբեր ունակություններով երեխաների ուսուցման անհատական տարբերակված մոտեցման խնդիրը:

Ինտեգրված դասերը երեխաներին դուր է գալիս: Դրանք հետաքրքրություն են առաջացնում գիտելիքների նկատմամբ, տալիս են շատ նոր, օգտակար գիտելիքներ, պարունակում են մեծ հուզական լիցք: Այդ դասերն օգնում են բանավոր խոսքի զարգացման և բառապաշարի հարստացման կարևոր գործին,ձևավորում են գեղագիտական ճաշակ, բնության գեղեցկությունն ու հարստությունը, ստեղծագործական ներուժը հասկանալու և գնահատելու, երևույթները բազմակողմանի ընկալելու ունակություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Ս. Վարդումյան, Լ.Հարությունյան, Ն. Ջաղինյան, Գ. Վարելլա,Է. Աբորդո

«Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, տեսություններ, մեթոդներ, գնահատում» Երևան 2003թ

2.Մ. Աստվածատրյան, Ա. Արնաուդյան, Ս. Վարդումյան, Ի. Օհանովա, Ռ.Պետրոսյան, Լ. Երեմյան, «Ինտեգրված թեմատիկ միավորներ», Երևան, 2003թ

3.Վ. Գյուլազյան, լ. Առուշանյան, Մ. Դասպարյան «Ուսուցչի ուղեցույց տետր» 2009թ.

4.Ն. Հակոբյան, ս.. Գևորգյան, Ա. Հովհաննիսյան, Ա. Դավթյան «Մանկավարժական հաղորդակցում», Երևան 2010թ.

5.Դ. Գասպարյան ,,Գրականություն>>.

6.. « Ինտեգրումը կրթական գործընթացում » - Փնջոյան Տ.

7. Յա. Ա. Կոմենսկի «Մեծ դիդակտիկա» Համացանց

8. Համացանց